ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք.Երևան ____.____.2026թ

«Էներջի Սփփլայ» ՍՊ ընկերությունը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «**Մատակարար**», հանձինս տնօրեն Ս. Վիրաբյանի, գործելով կանոնադրության հիման վրա, մի կողմից,
և
«» ՓԲ ընկերությունը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «**Սպառող**», հանձինս _____, գործելով կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

հետագա շարադրանքում միասին անվանվելով՝ «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**»,

առաջնորդվելով «Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած՝ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով *(այսուհետ՝ ԷՄԱ կանոններ),* էլեկտրաէներգետիկական բաշխման ցանցային կանոններով *(այսուհետ՝ ԷԲՑ կանոններ)* և այլ իրավական ակտերով, կնքում են սույն պայմանագիրը *(այսուհետ՝ Պայմանագիր),* հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրի 3.1. կետում սահմանված պայմաններով և սակագնով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով և Պայմանագրի դրույթներով:
2.2. Մատակարարը պարտավորվում է առաքել այնքան էլեկտրական էներգիա, որքան պահանջարկ կունենա Սպառողը:
2.3. Մատակարարը պարտավոր է Պայմանագրով սահմանված կարգով Սպառողին ներկայացնել հարկային հաշիվ՝ ներառելով սպառված էլեկտրաէներգիայի քանակը և վճարման ենթակա ընդհանուր գինը:
2.4. Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրով սահմանված կարգով:
2.5. Սպառողն իրավունք ունի Մատակարարից պահանջել տրամադրել իրեն մատակարարած էլեկտրական էներգիայի քանակի և դրա դիմաց կատարած վճարումների վերաբերյալ տեղեկատվություն:

2.6. Կողմերը սույնով համաձայնվում են, որ սույն պայմանագրի կնքումից հետո Սպառողի էլեկտրաէներգիայի մատակարարման հարաչափերի և/կամ սխեմայի փոփոխության, այդ թվում նաև՝ ենթաբաժանորդների ավելացման դեպքում, Սպառողը պարտավորվում է նախապես տեղեկացնել Մատակարարին և համաձայնեցնել վերջինիս հետ:

3. ՄԱՏԱՐԱԿԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԳԻՆԸ, ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի 1 կՎտԺ սակագինը (այսուհետ՝ «Գին» կամ «Սակագին») սահմանվում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով:

3.2. Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է ԷՄԱ կանոններով սահմանված կարգով:

3.3. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառած էլեկտրական էներգիայի ընդհանուր գինը որոշվում է Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սակագնի և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Էլեկտրական էներգիայի գինն իր մեջ ներառում է հաղորդման, համակարգի օպերատորի և շուկայի օպերատորի ծառայությունների հետ կապված բոլոր տեսակի ծախսերը, ինչպես նաև թույլատրելի առավելագույն հզորության վճարը: Բաշխման հետ կապված ծախսերը ներառված չեն սույն Պայմանագրի հավելված 1-ով նախատեսված սակագնի մեջ, դրանց հետ կապված ծախսերը կրում է Սպառողը:

3.4. Սպառողը յուրաքանչյուր ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի դիմաց պարտավորվում է վճարել **մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսի 15-ը՝** Մատակարարի կողմից ներկայացված հաշվի հիման վրա:

3.5. Սպառողի կողմից վճարումը կատարվում է Պայմանագրի վավերապայմաններում նշված Մատակարարի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

3.6. Սպառողը մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում գրավոր դիմում է Մատակարարին ճշգրտումների իրականացնելու և սխալի առկայության դեպքում շտկելու պահանջով: Մատակարարը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է քննարկել Սպառողի դիմումը և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել Սպառողին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

4.1. Պայմանագիրը Կողմերի կողմից ստորագրվում է առաջին էջում նշված ամսաթվին, սակայն ուժի մեջ է մտնում էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի (այսուհետ՝ «ԷՄՇ») կանոններին համապատասխան ԷՄՇ շուկայի օպերատորի կողմից Սպառողին ԷՄՇ մասնակցի (Մատակարարի) պրոֆիլում որպես սպառման կետ ավելացնելու պահից: Ընդ որում, որպես սպառման կետ ավելացումը կարող է տեղի ունենալ փուլային եղանակով՝ ըստ առանձին ենթակայանների (կամ լարման պատկանելության կամ հաշվիչի), որպիսի դեպքում Պայմանագիրը կոնրետ ենթակայանի (կամ լարման պատկանելության կամ հաշվիչի) մասով ուժի մեջ է մտնում Մատակարարի պրոֆիլում տվյալ ենթակայանի (կամ լարման պատկանելության կամ հաշվիչի)՝ որպես սպառման կետ ավելացնելու պահից:

4.2. Պայմանագիրը գործում է անժամկետ: Պայմանագրի Գինը գործում է անփոփոխ մինչև 2026 թվականի փետրվարի 1-ը: Կողմերը կարող են բանակցել 2026 թվականի փետրվարի 1-ից հետո գործող գնի վերանայման ուղղությամբ: Մատակարարն իրավունք ունի մինչև 2026թ.-ի հունվարի 25-ը (ներառյալ) Սպառողին՝ սույն Պայմանագրով նախատեսված ծանուցումների ուղարկման որևէ եղանակով ներկայացնել Սպառողին էլեկտրաէներգիայի մատակարարման նոր Գինը, որն ուժի մեջ է մտնելու 01/02/2026թ.-ից: Գնի փոփոխմանն անհամաձայնության դեպքում Սպառողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը 01/02/2026թ.-ից: Մինչև 2026թ.-ի հունվարի 30-ը Սպառողի կողմից Մատակարարին նոր Գնի վերաբերյալ որևէ առարկություն չներկայացնելու դեպքում Գնի փոփոխությունը համարվում է ընդունված և համաձայնեցված՝ առանց որևէ լրացուցիչ փաստաթղթի (այդ թվում՝ լրացուցիչ համաձայնագրի) ստորագրման: Եթե մինչև 2026թ. հունվարի 25-ը Մատակարարը Գնի փոփոխման վերաբերյալ ծանուցում չի ուղարկում, ապա 2026 թվականի փետրվարի 1-ից շարունակում է գործել տվյալ պահի գործող Գինը:

Սույն կետով սահմանված՝ Գնի վերանայման կարգավորումները նույնությամբ գործում են հաջորդ տարիների համար:

4.3. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել՝

4.3.1. Մատակարարի կողմից ցանկացած պահի՝ այդ մասին 2 օր առաջ ծանուցելով Սպառողին, եթե Սպառողի կողմից չեն կատարվել իր պարտավորությունները,

4.3.2. ցանկացած պահի՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

4.3.3. Սպառողի կողմից միակողմանի՝ լուծումից առնվազն 2 (երկու) ամիս առաջ տեղեկացնելով Մատակարարին,

4.3.4. Մատակարարի կողմից միակողմանի, այդ մասին առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ տեղեկացնելով Սպառողին,

4.3.5. Պայմանագրի 4.2 և 6.9 կետերով սահմանված դեպքում:

4.4. Պայմանագրի փոփոխումը, լուծումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ համապատասխան փոփոխության, լուծման կամ դադարման պահն սույն պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ, ԷՄԱ կանոններով, ԷԲՑ կանոններով, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կարգով:

5.2. Սպառողի կողմից Պայմանագրով սահմանված վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով:

5.3. Սպառողի կողմից Պայմանագիրը մինչև 2027թ.–ի փետրվարի 1 (կամ Պայմանագրի 4.2 կետի հիմքով երկարաձգված լինելու դեպքում՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 1–ը) միակողմանի լուծելու դեպքում՝ անկախ լուծման հիմքից (բացառությամբ Պայմանագրի 4.2 կետով սահմանված նոր Սակագնին համաձայնություն չհայտնելու, ինչպես նաև Պայմանագրի 6–րդ բաժնով նախատեսված Պայմանագրի պայմանների փոփոխությունների համաձայնություն չհայտնելու դեպքերի), իրականացվում է Սակագնի վերահաշվարկ, որի

արդյունքում Պայմանագրի հավելված 1–ում նշված Սակագինը փոփոխվում է՝ ավելանալով 1.5 դրամով և կիրառվելով նախորդող ժամանակահատվածի վրա, այսինքն՝ տվյալ տարվա փետրվարի 1–ից (կամ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, եթե այն ավելի ուշ է, քան փետրվարի 1–ը) մինչև լուծման պահը սպառման ամբողջ քանակը պետք է բազմապատկվի հավելյալ 1.5 դրամով և ստացված գումարը վճարվի Մատակարարին լուծման պահից 20 օրվա ընթացքում:

5.4. Կողմը պայմանագրային պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չի կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Ֆորս մաժոր համարվող դեպքերը, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանվում է ԷՄԱ կանոններով: Այն դեպքում, երբ Ֆորս մաժորը տևում է ավելի, քան 3 (երեք) օրացույցային օր՝ Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Պայմանագրով սահմանված կարգավորումների և «Էներգետիկայի մասին» օրենքի կամ ԷՄԱ և ԷԲՑ կանոնների միջև հակասություն առաջանալու պարագայում առաջնահերթությունը տրվում է օրենքին և կանոններին:

6.2. Պայմանագրում հասկացություններն ունեն «Էներգետիկայի մասին» օրենքով, ԷՄԱ և ԷԲՑ կանոններով սահմանված նշանակությունը, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ Պայմանագրով:

6.3. Կողմերի միջև առաջացող բոլոր վեճերը (տարաձայնությունները) կարգավորվում են բանակցությունների միջոցով՝ համապատասխան խնդրի մասին Կողմի գրավոր դիմումը մյուս Կողմին ներկայացնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացում: Նշված ժամկետում համաձայնության չգալու կամ գրավոր դիմումն անպատասխան մնալու դեպքում Կողմերից յուրաքանչյուրը կարող է վեճի լուծումը հանձնել ՀՀ իրավասու դատարանին:

6.4. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Տեղեկությունների փոխանակումն ու փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, կամ ուղարկվել են Կողմերի սույն Պայմանագրի 7-րդ բաժնում նշված (կամ որոնք Կողմերը Պայմանագրի կնքումից հետո կտրամադրեն միմյանց) էլեկտրոնային փոստի հասցեներով, կամ Մատակարարի «Էներջի Սփփլայ» (Energy Supply) հեռախոսային հավելվածի միջոցով:

6.5. Մատակարարի կողմից Պայմանագրի 6.4 կետում նշված որևէ եղանակով ուղարկված ծանուցումները, այդ թվում որոնք ներառում են Պայմանագրի էական պայմանների (այդ թվում նաև՝ Գնի փոփոխության վերաբերյալ) փոփոխություն, համարվում են ընդունված և համաձայնեցված Սպառողի կողմից՝ ծանուցման մեջ նշված կամ Պայմանագրով սահմանված ժամկետում, եթե այդպիսին առկա է:

6.6. Նշված ծանուցումների մեջ նշված փոփոխություններին չհամաձայվելու դեպքում Սպառողն իրավունք ունի 10-օրյա ժամկետում (եթե այլ ժամկետ սահմանված չէ Պայմանագրով կամ ծանուցման մեջ) Մատակարարին տեղեկացնել այդ մասին՝ ուղարկելով վերջինիս Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցում:

6.7. Պայմանագրի հիման վրա ծագող հարաբերությունների շուրջ էլեկտրոնային փոստի հասցեներով, ինչպես նաև «Էներջի Սփփլայ» (Energy Supply) հեռախոսային հավելվածի միջոցով փոխանակված ողջ հաղորդակցությունը (նամակագրությունը) վեճերի առաջացման դեպքում Կողմերի կողմից ճանաչվում է որպես պատշաճ ապացույց:

6.8. Կողմերը պարտավոր են Պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր հասցեի փոփոխության մասին, ապա Պայմանագրում նշված հասցեով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

6.9. Կողմերը սույնով համաձայնվում են, որ սույն Պայմանագրի բոլոր պայմանների փոփոխությունները Մատակարարի կողմից միակողմանի կարող են կատարվել Պայմանագրով սահմանված ծանուցումներ կատարելու միջոցով (նշված փոփոխությունները կատարվում են «անակցեպտ» կարգով, այսինքն՝ դրանց մասով չի պահանջվում Սպառողի առանձին համաձայնությունը), որոնց անհամաձայնության դեպքում Սպառողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ (եթե այլ ժամկետ սահմանված չէ Պայմանագրով կամ ծանուցմամբ) ծանուցելով Մատակարարին:

6.10. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից՝ հայերեն լեզվով՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրի համար:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սպառող՝	**Մատակարար՝**
«» ՓԲԸ	«Էներջի Սփփլայ» ՍՊԸ
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ 00242701
Հասցե՝	Հասցե՝ ք. Երևան, Հր. Քոչար 4
Բանկ՝ «» ՓԲԸ	Բանկ՝ Էվոկաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝	Հ/Հ՝ 1660030209889900
Էլ. փոստ՝;	Էլ. փոստ.՝ info@e-supply.am
Հեռ.՝	
Տնօրեն՝	Տնօրեն՝ Ս. Վիրաբյան
_____	_____

Հավելված 1

Էլեկտրաէներգիայի մատակարարման թիվ _____ պայմանագրի

ՍՊԱՌՈՂԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 1 կՎտժ-ի ԳԻՆԸ

N	**Ենթակայանի անվանումը և հաշվիչ(ներ)ի համարը**	**Սակագին՝ դրամ/կՎտժ առանց ԱԱՀ**

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սպառող՝	**Մատակարար՝**
«» ՍՊԸ	«Էներջի Սփփլայ» ՍՊԸ
Հասցե՝	Հասցե՝ ք. Երևան, Տերյան 69
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ 00242701
Բանկ՝ «» ՓԲԸ	Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝	Հ/Հ՝ 1570078134860100
Էլ. փոստ՝;	Էլ. փոստ.՝ info@e-supply.am
Հեռ.՝	
Տնօրեն՝	Տնօրեն՝ Ս. Վիրաբյան
_____	_____